# «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում**

**Առարկան՝ Ռուսաց լեզու**

**Հետազոտող ուսուցիչ՝ Սարգսյան Նոնա**

**Ուսումնական հաստատություն՝ Մաստարայի միջնակարգ դպրոց**

*Երևան 2022*

**Բովանդակություն**

Ներածություն------------------------------------------------------------------------------------ 3

Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում------------------------------------------------------------------------------------ 4

Եզրակացություն-------------------------------------------------------------------------------- 14

Օգտագործված գրականության ցանկ------------------------------------------------------- 15

## Ներածություն

***<u>Թեմայի կարևորությունը</u>***: Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ, որոշելով դասընթացի բովանդակությունը, ձևերը եւ մեթոդները: Ուսուցման կազմակերպման մեջ ինտեգրումը նկարագրվում է Ս. Մ. Գապենկովի և Գ. Ֆ. Ֆեդորեթսի գրվածքներում: Այլ գիտնականներ ևս սահմանել են մանկավարժության ինտեգրման մեթոդաբանական հիմքերը՝ երեխայի զարգացման առաջատար դերի փիլիսոփայական հայեցակարգը, մանկավարժական երևույթներին համակարգված և ամբողջական մոտեցման տրամադրումը. կրթության և զարգացման գործընթացների միջև հարաբերությունների վերաբերյալ հոգեբանական տեսությունները:

Հետազոտողները ինտեգրումը հասկանում են մանկավարժական գործընթացի զարգացման կարևորագույն բնագավառներից մեկը, որը կապված է անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում: Հավատարիմ մնալով ընտրված մեթոդաբանական դիրքորոշումներին, գիտնականները բացահայտում են մի շարք հասկացություններ՝ ինտեգրման գործընթաց, ինտեգրման սկզբունք, ինտեգրման գործընթացներ, ինտեգրման մոտեցում:

***<u>Թեմայի նպատակը</u>***: Ինտեգրված ուսուցում իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, և փորձը ցույց է տվել, որ այդ մեթոդով վարած դասերի արդյունավետությունը բավականին բարձր է:

Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեության: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժություն:

## Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում

Ժամանակակից մանկավարժության մեջ տարբերակվում են ինտեգրված ուսուցման հետևյալ տեսակները.

- Միջառարկայական
- Բազմառարկայական
- Անդրառարկայական

Որպես միավորող առանցք հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: Լ. Դին Ֆինք Կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Ինտեգրված ուսուցման դասի տիպերը Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի տիպի ճիշտ ընտրությունն է:

Դասի տիպերը կարող են լինել

- դերախաղ
- սեմինար քննարկում
- դաս-միջոցառում
- մեծ-դաս Հիմնականում նման դասերը կիրառվում են հետևյալ դեպքերում
- երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում

- թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից
- երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից

առարկայի դասավանդման ժամանակ զարգացնող ուսուցում իրականացնել ու ժամանակ:

Դասը ընթանում է փուլ առ փուլ: Հաշվի առնել նաև բոլոր հնարավոր ընդհատումները՝ կապված տեսողական և բաժանվող նյութերի, սարքավորումների և քարտերի: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը:

Նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
3. ինտեգրման ձևը,
4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
5. նյութի հաջորդականության կառուցվածքը,
6. նյութի ներկայացման միջոցները,
7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Ինտեգրված ուսուցման մեթոդով դասի տևողությունը Ինտեգրված ուսուցման դասը կարող է տարբերվել իր տևողությամբ սովորական դասերից: Բայց առավել ագույնը օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալ ու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Երբեմն ավելի մեծ ծավալով, և երկուսից ավելի առարկաներ ինտեգրելու դեպքում կարող ենք դասը կազմակերպել մեծ-դասի կամ դասամիջոցառման ձևով, ավելի երկար տևողությամբ:

Ծրագրի շարունակականությունը ապահովում է այն իրականացնելով տարբեր դասարաններում, տարբեր առարկաների շրջանակներում՝ օրինակ, որոշակի առումով հայերենի քերականությունը և մաթեմատիկան, մաթեմատիկան և երաժշտությունը, մաթեմատիկան և պատմությունը: Այս մոդելով կարելի է կազմակերպել ցանկացած դաս ցանկացած առարկայից: Նախագծի պարբերաբար կիրառումը սովորողների մոտ ինքնուրույն աշխատել ու, դասի ընթացքում անելիքները հստակ գիտակցել ու ժամանակին կատարել ու հմտությունները նկատելիորեն հղկում և զարգացնում է: Ներկայացնեմ՝ իմ կողմից կազմակերպված նմանօրինակ դաս:

Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Հասկանալի է, որ տարրական դասարանների աշակերտները լիովին ի վիճակի չեն լինի գտնել ու հարցաշարերում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դեպքում համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտծնող, աշակերտտեղեկատվական, գիրք, աշակերտուսուցիչ, աշակերտ աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը: Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ պատմությունից, հայրենի բնությունից, երաժշտությունից ու նկարչությունից: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավորություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազմակողմանի զարգացման առումով: Քիչ չէ այն ուսուցիչների թիվը, ովքեր գերադասում են աշխատել միայն ավանդական մեթոդներով: Նրանք դժվարությամբ են ընդունում բարեփոխումներով պայմանավորված նորը: Ոչ ոք չի կարող հերքել, որ մեծ են մեր

ուսուցչապետերը՝ Մ. Մաքսոցից մինչև Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Լ. Շանթ, Մանդինյան, Հ. Օշական, Ստ. Լիսիցյան, Ա. Տեր Գրիգորյան և ուրիշներ, և նրանց ավանդած մեթոդները, իհարկե, ընդունելի են: Սակայն այդքան հզոր թիկունք ունենալը չի նշանակում առաջ չնայել: Դարձյալ վկայակոչենք Պ. Սևակին. «Ժամանակն է, որ մենք հասկանանք և մեկընդմիշտ հիշենք, որ Թումանյանն ու Իսահակյանը մեր թիկունքն են, մեր մեջքը, մեր հետնապահ զորագունդը»:

Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենափոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր:

Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավել աբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալ ու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնացվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ

հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,
2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,
3. ինտեգրման ձևը,
4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,
5. նյութի հաջորդականության կառուցվածքը,
6. նյութի ներկայացման միջոցները,
7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,
8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Կատարվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու

պատճառները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե, 90-րոպե): Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

Ժամանակակից մանկավարժությունը ուսուցման և դաստիարակման գործընթացը արդի կյանքի պահանջներին համապատասխանեցնելու, առավել ազդու և անձնակենտրոն դարձնելու նպատակ ունի: Ուսուցման գործընթացում այսօր կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերումը, այլև այդ գիտելիքները կյանքում կիրառելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ուսուցման գործընթացը ուսուցչի և աշակերտների ներդաշնակ գործունեություն է, որի ընթացքում իրականանում են որոշակի գիտելիքներ ձեռք բերելու, դրանց համապատասխան՝ կարողություններ, հմտություններ ձևավորելու նպատակադրումները: Ուսուցման մեթոդական համակարգը ներառում է երեք կարևոր խնդիր՝

- կրթության բովանդակություն. ի՞նչ սովորեցնել,
- կրթության նպատակներ. ինչո՞ւ սովորեցնել
- ուսուցման մեթոդներ. ինչպե՞ս սովորեցնել

Դեռևս վաղ ժամանակներից ձևավորվել, հաստատվել ու տարածվել են ուսուցչի և սովորողների փոխգործունեության մեթոդների, հնարների երեք համախումբ:

- ոչ գործուն կամ պասիվ մեթոդների համախումբ.
- գործուն կամ ակտիվ մեթոդների համախումբ.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդների համախումբ:

Ուսուցման ոչ գործուն կամ պասիվ մեթոդների համախումբը գործունեության մի ձև է, երբ ուսուցիչը դասի ընթացքում հիմնական գործող անձն ու կառավարողն է, իսկ սովորողները ուսուցչի հրահանգներին ենթակա ունկնդիրներ են: Այսպիսի ուսուցման դեպքում ուսուցչի և սովորողների կապն իրականանում է հարցումների, ինքնուրույն աշխատանքների, թեստերի միջոցով: Սովորողների՝ ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից ուսուցման ոչ գործուն կամ պասիվ մեթոդական համակարգը արդյունավետությամբ աչքի չի ընկնում:

Ուսուցման գործուն կամ ակտիվ մեթոդների համախումբը ուսուցչի և սովորողների փոխազդեցության մի ձև է, երբ ուսուցիչն ու սովորողները փոխադարձ ազդեցության ճանապարհով իրականացնում են ուսումնական գործընթացը: Այս համակարգի դեպքում աշակերտները ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ գործընթացում հիմնական գործող անձը ուսուցիչն է, ապա այստեղ թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողները հավասար իրավունք ունեն գիտելիքի ձեռքբերման, ինքնուրույն նաբար հետազոտական գործունեություն ծավալելու առումներով: Բացի դրանից՝ ակտիվ կամ գործուն մեթոդների կիրառության ընթացքում սովորողը որոշակի դեր է ստանձնում և այդ դերակատարման ընթացքում նաև սովորում է:

Առարկաների անվանումների կուտակումն իրականանում է հետևյալ ընթացքով. սկզբում յուրացվում են երեխայի ն անմիջականորեն շրջապատող առարկաների անվանումները, հետո մեծահասակների ու խաղալիքների անվանումները, հագուստի և վերջապես մարմնի ու դեմքի մասերի անվանումները: Մինչև 2 տարեկան հասակը այսպիսի բառերի քանակը զգալիորեն աճում է: Խոսքի զարգացման նորմալ պայմանների դեպքում սովորաբար երեխայի մոտ կտրուկ անցում է կատարվում երկրորդ տարվա երկրորդ կեսին, երբ կիրառվող բառերի քանակի աճմանը զուգընթաց ի հայտ են գալիս առաջին 2-3 բառից կազմված նախադասությունները: Երեխայի ինքնուրույն խոսքն արդեն ներգրավված է իր գործունեության մեջ. նա օրորում է տիկնիկին, դիմում է արջուկին, կերակրում նրանց:

Մեծահասակների հետ հաղորդակցման արդյունքում երեխայի խոսքն աստիճանաբար սկսում է կազմակերպել նրա գործողությունները:

Յուրաքանչյուր նոր առարկա, որն ինչ-որ բանով նման է երեխային արդեն ծանոթ առարկաներից որևէ մեկին, հեշտությամբ կապի մեջ է մտնում այդ առարկան կապող բառի հետ, ինչի արդյունքում բավական արագ աճում է երեխայի կողմից ընկալվող բառերի քանակը, այսինքն, նրա պասիվ բառապաշարը: Երբ երեխային խնդրում են որևէ պարզ գործողություն կատարել, ապա անհրաժեշտ է նաև ուղղորդել նրա վարքը: Մեծահասակի դիմելաձևը կարևոր պայման է երեխայի գործողության համար:

Այսպիսով, երեխայի զարգացման մեջ մի կողմից առանձնացվում են այն փուլերը, որոնց ընթացքում տեղի է ունենում միջանձնային հարաբերությունների նորմերի և դրդապատճառների յուրացում ձևավորելով դրդապատճառների և պահանջմունքների ոլորտը, մյուս կողմից կարևորվում են այն փուլերը, որոնց ընթացքում ձևավորվում է երեխաների ինտելեկտուալ-ճանաչողական ոլորտը:

Այստեղ է, որ հոգեկանի զարգացման հետ մեկտեղ երեխան աստիճանաբար սկսում է յուրացնել ոչ միայն իրերի, այլ և՝ բառերի աշխարհը: Նա կյանքի է կոչում հոգեկանի զգայաշարժողական, հուզական ոլորտը: Բնականաբար, մեծահասակի կողմից իրեն ուղղված լեզուն և խոսքը, երեխան անմիջապես չի յուրացնում, թեև մշտապես գտնվում է այդ տիրույթում: Հետագայում նա ոչ միայն յուրացնում է բառերի աշխարհին, այլև կարողանում է այդ բառերով ինքնուրույն դրսևորել իրեն, կապ հաստատել մեծահասակների և իրերի միջև: Անշուշտ, այստեղ նույնպես հսկայական նշանակություն է ունենում երեխայի տեսողական, լսողական, զգայաշարժողական ընկալումը: Բնականաբար խոսքի, լեզվի և զգայությունների միջև եղած հարաբերություններն ու կապերը հոգեկանի զարգացման գործում հսկայական նշանակություն են ստանում: Խոսքի և հոգեկանի միջև եղած կապի ընկալման դժվարությունն այն է, որ փաստորեն երեխան նույնքան նշանակություն է տալիս իր զգայարաններին, որքան այն բառերին, որոնք միջնորդավորում են իր զգայաճանաչողությունն ու շրջապատող միջավայրի իրերը: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես բախվում ենք հոգեկանի զարգացման սկզբունքին: Որոշակի ժամանակահատվածում զգայական ճանաչողության զարգացման հետևանքով է միայն հնարավոր, որպեսզի երեխան կարողանա յուրացնել լեզուն և խոսքը (մանկացույց

անել ու օրինակը): Օրինակ,մեծահասակն օգնության է հասնում, երբ երեխան ձգվում է դեպի իրեն գրավող առարկան, բայց չի կարողանում վերցնել այն: Արդյունքում երեխան մատնացույց է անում իրեն գրավող առարկան, որն էլ դառնում է նրա և մեծահասակի միջև հաղորդակցման գործողություն: Առաջին տարվա երկրորդ կեսին ինտենսիվորեն զարգանում է խոսքի ընկալումը: Հենց այդ տարիքից է, որ երեխայի հանդեպ հոգ տանող մեծահասակը պայմաններ է ստեղծում երեխայի խոսքի ընկալման համար: Խոսքը որևէ գործողությամբ զուգակցելը շատ կարևոր է, քանի որ լսելով՝ երեխան նախ ընկալում է հուզական տոնը, ապա՝ տարբերակում է առանձին բառերը:

Խոսքի ընկալման իրավիճակից կախված՝ երեխայի հակազդումների մակարդակը կարող է բարձրանալ. սկզբում երեխան հակազդում է մյուս առարկաներից մեկուսացած որոշակի առարկայի, իսկ հետո ընտրում և գտնում է կողք կողքի գտնվող 2-3 առարկաներից մեկը:

Սովորաբար երեխաները, լուծելով մեծ քանակությամբ կոնկրետ առաջադրանքներ, իրենք են տարերայնորեն բացահայտում նրանց լուծման ընդհանուր միջոցը, ընդ որում այն միջոցը տարբեր աշակերտների կողմից գիտակցվում է տարբեր չափով: Զարգացնող ուսուցումը ենթադրում է երեխաների և ուսուցչի կողմից խնդիրների մի մեծ խմբի լուծման միջոցի համատեղ բացահայտում և ձևակերպում: Այս դեպքում ընդհանուր միջոցը դառնում է օրինակ և հեշտ տարածվում է այդ դասի այլ առաջադրանքների վրա, ուսումնական գործունեությունը դառնում է առավել արդյունավետ, իսկ սխալներն աստիճանաբար վերանում են:

Որպես օրինակ՝ կարող է ծառայել լեզվի դասերի ժամանակի կառուցվածքաիմաստային վերլուծությունը:

Երեխաները պետք է յուրացնեն բառի նշանակության և ձևի միջև կապը: Դրա համար էլ նա յուրացնում է բառի հետ գործողության հիմնական միջոցները. պետք է փոխել բառը, համեմատել այն նոր ձևավորվածի հետ և իմաստային և ձևի առումներով, դուրս բերե; կապ ձևի և նշանակության փոփոխությունների միջև:

Ուսումնական օպերացիաները երրորդ բաղադրիչն են և մտնում են գործողությունների միջոցի մեջ: Օպերացիան և ուսումնական խնդիրը ուսումնական գործունեության կառուցվածքի հիմնական օղակն են:

Յուրաքանչյուր ուսումնական օպերացիա պետք է մշակված լինի: Աշակերտը, կողմնորոշվելով օպրեացիաների կազմում, կատարում է դրանք նյութականացված՝ ուսուցչի վերահսկողության տակ: Սովորելով դանել գրեթե անսխալ՝ նա անցում է կատարում արտասանմանը, և վերջապես, օպերացիաների կազմի կրճատման փուլում նա արագ լուծում է խնդիրը մտքում՝ հաղորդելով ուսուցչին պատրաստի պատասխանը:

Չորրորդ բաղադրիչը հսկողությունն է: Սկզբնապես աշակերտների ուսումնական գործունեությունը հսկում է ուսուցիչը: Բայց աստիճանաբար նրանք սկսում են իրենք հսկել իրենց: Առանց ինքնավերահսկողության հնարավոր չէ ուսումնական գործունեության լիարժեք զարգացումը, դրա համար էլ հսկողության ուսուցանումը կարևորագույն և բարդ մանկավարժական խնդիր է: Բավարար չէ աշխատանքը հսկել միայն վերջնական արդյունքի հիման վրա, երեխայի համար կարևոր է ուսումնական գործունեության ամբողջ ընթացքի հսկողությունը: Աշակերտին սովորեցնելը՝ վերահսկելու իր ուսումնական գործունեության ընթացքը, նշանակում է նպաստել այնպիսի հոգեկան ֆունկցիայի ձևավորմանը, ինչպիսին ուշադրությունն է:

Հսկողության վերջին փուլը գնահատականն է: Այն կարելի է համարել ուսումնական գործունեության հինգերորդ բաղադրիչ: Երեխան, հսկելով իր գործունեությունը, պետք է կարողանա և ադեկվատորեն գնահատել այն:

Մյուս կողմից, ուսուցիչը, գնահատելով աշակերտների աշխատանքը, չի բավարարվում միայն միավորներ դնելով: Երեխաների ինքնազարգացման համար կարևոր է ոչ այնքան միավորը որպես այդպիսին, այլ բովանդակային գնահատականը, այսինքն՝ բացատրությունը՝ ինչու է դրվել այս կամ այն գնահատական-միավորը, ինչ դրական և բացասական կողմեր ունի պատասխանը: Բովանդակայնորեն գնահատելով ուսումնական գործունեությունը, նրա արդյունքները, գործընթացը ուսուցիչն առաջադրում է որոշակի կողմնորոշիչներ՝ գնահատման չափանիշներ, որոնք պետք է յուրացվեն երեխաների կողմից: [1]

---

[1] 1.Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012:

2.Краевский В. В. Методология педагогической науки.- М.,2000.

3.Петровский А. В. Основы педагогики и психологии высшей школы.- М.,1986.

Талызина Н. Ф. Педагогическая психология.- М.,2006

## Եզրակացություն

Կրտսեր դպրոցականները բարձր են գնահատում իրենց աշխատանքը, եթե նրա վրա նրանք ծախսել են շատ ժամանակ, ջանքեր՝ անկախ ն բանից, թե ինչ են ստացել արդյունքում: Ուրիշ երեխաների աշխատանքին նրանք առավել քննադատաբար են մոտենում, քան իրենց սեփականին: Այս կերպ երեխային սովորեցնում են գնահատել ոչ միայն իրենց աշխատանքը, այլև համադասարանցիների աշխատանքը՝ բոլորի համար ընդհանուր կարոններով: Հաճախ օգտագործվում են այնպիսի հնարներ, ինչպիսիք են օրինակ՝ պատասխանների կոլեկտիվ քննարկումը: Այս հնարները դրական էֆեկտեն թողնում տարրական դպրոցում:[3, 47-52]

Ուսումնական գործունեությունն, ունենալով բարդ կառուցվածք, անցնում է կայացման երկարատև ուղի: Նրա զարգացումը շարունակվում է ամբողջ դպրոցական կյանքի ընթացքում, բայց հիմքերը դրվում են ուսուցման սկզբնական տարիներին: Դպրոցական ուսուցանումը տարբերվում է ոչ միայն երեխայի գործունեության հատուկ սոցիալական նշանակալիությամբ, այլ և մեծերի օրինակների և գնահատականների հետ հարաբերությունների միջնորդավորվածությամբ: Այս առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնական գործունեության յուրահատկությունը ազդում են երեխայի հոգեկան ֆունկցիաների, անձնային կազմավորումների, կամային վարքի զարգացմանը:

Ուսումնական գործընթացի նպատակադրումը ձևավորվում է ուսումնաճանաչողական դրդապատճառներով, որոնց թվին են պատկանում ուսումնական գործողությունների ընդհանրացված եղանակներ ձեռք բերել ու դրդապատճառները:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կոորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկակապերը»:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012:
2. Краевский В. В. Методология педагогической науки.- М.,2000.
3. Петровский А. В. Основы педагогики и психологии высшей школы.- М.,1986.

Талызина Н. Ф. Педагогическая психология.- М.,2006